ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ

0025, Երևան, Նալբանդյան 130, ընդունարան հեռ.՝ 59 66 59, քարտուղարություն հեռ.՝ 59 61 25

№ 215-2-4465 « 28 » 12 2015թ.

Ձեր

ՀՀ արտաքին գործերի նախարար
պարոն Էդվարդ Նալբանդյանին

Հարգելի պարոն նախարար

Հայտնում եմ, որ Արաբական Միացյալ Էմիրությունների ներքին գործերի նախարար, գեներալ-լեյտենանտ Սեյֆ բին Զայիդ Ալ Նահյանի հրավերով **2016թ. հունվար ամսին** կկայանա իմ գլխավորած պատվիրակության այցը Արաբական Միացյալ Էմիրությունների Աբու Դաբի քաղաք:

Այցի ընթացքում կքննարկվեն ոստիկանական հետագա համագործակցության և մի շարք այլ խնդրահարույց հարցեր:

Նախատեսվում է նաև «Հայաստանի Հանրապետության կառավարության և Արաբական Միացյալ Էմիրությունների կառավարության միջև անվտանգության բնագավառում համագործակցության մասին» միջկառավարական համաձայնագրի ստորագրումը, որի կնքման առաջարկությանը համաձայնություն է տրվել ՀՀ կառավարության 19.07.2012թ. թիվ 970-Ա որոշմամբ:

Խնդրում եմ Ձեր միջնորդությունը ՀՀ վարչապետին՝ այցի ընթացքում ՀՀ ոստիկանության պետին համաձայնագրի ստորագրման լիազորություններ տալու համար:

Հարգանքով՝

գեներալ-լեյտենանտ **Վլադիմիր Գասպարյան**

12596
28 12 15

Կատարող՝ Ա.Սիմոնյան /հեռ. 59-65-01/

Տեղեկանք

<<Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Արաբական Միացյալ Էմիրությունների կառավարության միջեւ անվտանգության բանագավառում համագործակցության և ահաբեկչության դեմ պայքարի մասին>> համաձայնագրի ստորագրման նպատակահարմարության վերաբերյալ

Հաշվի առնելով անվտանգության բնագավառում և ահաբեկչության դեմ պայքարում Հայաստանի Հանրապետության եւ Արաբական Միացյալ Էմիրությունների կառավարությունների միջեւ համագործակցություն ծավալելու եւ ամրապնդելու անհրաժեշտությունը, առաջարկվել է ստորագրել միջկառավարական համաձայնագիր, ինչը իրավական հիմք կստեղծի որպեսզի Կողմերը, իրենց ազգային օրենսդրությունների համաձայն, համագործակցեն հանցագործությունների կանխարգելման, խափանման և բացահայտման գործում:

Կողմերի միջև համագործակցությունը կիրականացվի մասնավորապես՝ ահաբեկչության, մարդկանց՝ հատկապես կանանց և երեխաների թրաֆիքինգի, թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և պրեկուրսորների ապօրինի շրջանառության, անօրինական միգրացիայի և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ ոլորտներում կատարվող հանցագործությունների կանխարգելման և խափանման վերաբերյալ տեղեկատվության և փորձի, փորձագետների, գիտական հետազոտությունների, վիճակագրական տվյալների փոխանակման, ինչպես նաև դասախոսությունների, սեմինարների, խորհրդակցությունների անցկացման և այլ միջոցներով:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ ոստիկանությունը նպատակահարմար է գտնում սույն Համաձայնագրի հաստատումը:

ՀՀ ոստիկանության շտաբի պետ,
ոստիկանության գեներալ-մայոր **Արամ Զաքարյան**